ՀԱՅԱՍՏԱՆԸ ԳԼՈԲԱԼ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Գագիկ Հարությունյան

Որպես հանրության հաջող գործունեության չափանիշ ընդունվում է նրա համարժեքությունը գլոբալ հարթությունում գործող տրամաբանությանը և գործընթացներին: Այդ համատեքստում համեմատվում են միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից հրապարակվող՝ Հայաստանի և տարածաշրջանի երկրների «տնտեսական ազատության» «կայացման» վարկանիշները: Վերլուծվում են ինքնիշխանության խնդրին առնչվող արդի տեսական մոտեցումները և այդ ոլորտում արդի քաղաքականության տրամաբանությանը ենթարկվող հնարավոր զարգացումները: Գլոբալ մարտահրավերներին և տեղեկատվական հասարակության չափանիշներին համարժեք լինելու տեսանկյունից քննարկվում են Հայաստանում ընթացող որոշ ներքաղաքական գործընթացներ և հայկական հանրության հիմնախնդիրները:

Ներածություն

Առնոլդ Թոյնբիի այն թեզը, թե քաղաքակրթությունների հաջող գործառնությունը ենթադրում է նետված մարտահրավերներին համարժեք պատասխաններ, այսօր չի դադարում արդիական մնալ [1]: Հիմք վերցնելով Թոյնբիի այս պնդումը՝ փորձենք Հայաստանի ձեռքբերումներն ու անհաջողությունները գնահատել այդ համատեքստում: Հավելենք միայն, որ Հայաստանն ունի ուրույն քաղաքակրթության բոլոր հատկանիշները, և այդպիսով հայկական հիմնախնդիրների պարագայում Թոյնբիի եզրաբանության կիրառումը միանգամայն արդարացված է [2]:

Վերջին 20 տարիներին հայ հասարակությունը, անցնելով իր պատմության չափազանց դժվար մի փուլ, ավելի համատեղելի է դարձել իրեն շրջապատող արտաքին աշխարհի հետ և, որ ամենակարևորն է՝ ավելի համարժեք է արձագանքում տեղի ունեցող գործընթացներին: Տեղի է ունենում որոշակի դրական շարժ հայ հասարակության գիտակցության մեջ: Օրինակ՝ էականորեն նվազել են սեփական խորհրդային-սոցիալիստական անցյալի «սևացման» կամ հակառակը՝ իդեալականացման միտումները: Դրան զուգահեռ՝ ձևավորվում է ժողովրդավարական համակարգի առավելությունների և թերությունների (որոնց թիվը նույնպես բավական մեծ է) ավելի սթափ ընկալում: Համապատասխանաբար զարգացում է ապրել նաև

քաղաքական ընտրանին. հայտնի բոլոր հիմնախնդիրների առկայությամբ հանդերձ՝ այն ձեռք է բերել պետական և քաղաքական կառավարման անհրաժեշտ հմտություններ, որոնք այնքան պակասում էին հետհեղափոխական առաջին տարիներին: Այս ամենը ցուցիչներն են այն բանի, որ Հայաստանում ձևավորվում է մի հանրություն, որը համարժեք է գնահատում սեփական հնարավորություններն ու իր տեղը գլոբալ աշխարհում և, միևնույն ժամանակ, զուրկ չէ ավելի հավակնոտ ծրագրեր իրագործելու ձգտումից և համապատասխան ներուժից:

1. Հայաստանը միջազգային վարկանիշային հրապարակումներում

Որպես վերոնշյալ դիտարկումների քանակական արտահայտություն կարող է ծառայել համաշխարհային մի քանի վարկանիշային հրապարակումների տվյալների վերլուծությունը: Հայտնի է, որ այդ վարկանիշները չպետք է ընդունել անվերապահորեն (տե՛ս, օրինակ [3]): Սակայն նման հրապարակումները նպաստում են այս կամ այն երկրի և հանրության վերաբերյալ օբյեկտիվ պատկերացումների ձևավորմանը: Մենք կսահմանափակվենք վարկանիշային երեք հրապարակումների արդյունքների քննարկմամբ:

Ամերիկյան առաջատար «ուղեղային կենտրոններից» մեկը՝ *Heritage* հիմնադրամը, կանոնավոր հրապարակում է *Economic Freedom Index*-ը՝ *տնտեսական ազատության* ցուցանիշը: Այս վարկանիշի տվյալներն արտահայտում են այս կամ այն հասարակության ազատության ոչ դեկլարատիվ, այլ նյութականացված մակարդակը:

Հաջորդը ՄԱԿ-ի զարգացման ծրագրի *(UNDP)* շրջանակներում հրապարակվող *մարդկային զարգացման ցուցանիշն է* (*Human Development Index),* որը մասնավորապես արտահայտում է հանրության սոցիալական, իրավական և կրթական զարգացման մակարդակը:

Որպես երրորդ վարկանիշային հրապարակում վերցվել է *Foreign Policy* հանդեսի և *Thomson Dialog* կազմակերպության կողմից հրապարակվող *Failed States Index*-ը, որը բառացի թարգմանվում է որպես *անգործունակության ցուցանիշ* և փաստորեն արտացոլում է այս կամ այն պետության կայացածության աստիճանը:

Վարկանիշային հրապարակումների նման ընտրությունը պայմանավորված է հեղինակող կազմակերպությունների հանդեպ վերլուծական հանրությունում ձևավորված վստահությամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ տնտեսական ազատության, մարդկային զարգացման և կայացածության մակարդակները զգալի չափով արտացոլում են պետության՝ շրջապատող աշխարհին համարժեք գործելու ունակությունը:

Freedom Index 2006.[1] *Աղյուսակ 1-ում* ներկայացված տվյալներից երևում է, որ *Տնտեսական ազատության ցուցանիշով* Հայաստանը զբաղեցնում է 32-րդ բավական բարձր տեղը: Նրա հարևանությամբ տեղ է զբաղեցնում նաև Վրաստանը, իսկ հետո միայն տարածաշրջանային այլ երկրները: Ուշադրության է արժանի *ներդրումային ազատության* բարձր ցուցանիշը, որը վարկանիշային հրապարակման առաջատարի՝ Հոնկոնգի մակարդակին է: Ներդրումային ակտիվությունը պայմանավորված է ոչ միայն *հայկական սիյուռքի* գործունեությամբ, ինչը որոշակիորեն մեղմում է Հայաստանի հաղորդակցային մեկուսացվածությունը [4]: Պետք է կարևորել նաև հանրապետությունում *տեղեկատվական տեխնոլոգիաների* զարգացումը. այս ոլորտում վերերկրյա հաղորդակցությունները գործնական դեր չեն խաղում:

Աղյուսակ 1

Economic Freedom Index 2006

№	Երկիր	Ընդհանուր	Բիզնեսի վարում	Աշխատանքի վարձատրություն	Դրամական դրամաշրջանառություն	Ներդրումային ազատություն	Ֆինանսական դրամաշրջանառություն	Ներդրումային ազատություն	Սեփականության իրավունքի ազատություն	Ստվերային դրամաշրջանառություն	Կոռուպցիայի դրամաշրջանառություն
1	Հոնկոնգ	90.9	87.3	100	95.6	89.4	93.1	90	90	90	80	93.6
4	ԱՄՆ	82.4	92.3	76.4	79.3	68.8	85	70	90	90	75	97.5
12	Էստոնիա	75.9	82	77.4	89.2	65.4	84.6	90	90	70	60	50.4
32	Հայաստան	74.6	79.7	75.6	93.3	84.3	79.7	90	90	50	31	72
35	Վրաստան	64.8	70.9	62.6	96.0	92	75.2	50	70	30	20	81.2
83	Թուրքիա	58.5	65.9	76.0	78.7	72.7	64.7	50	50	50	32	44.6
107	Ադրբեջան	54	57.2	67.6	86.7	79.2	75.5	30	30	30	19	64.4
119	Չինաստան	54.4	50.9	68.0	80	87.7	79.4	30	30	30	34	64.1
120	Ռուսաստան	54.3	66.1	62.6	93.9	68.9	68.1	30	30	30	28	65.6
125	Ուկրաինա	55.5	53.3	72.2	93.5	79.6	72.8	30	50	30	22	52.1
145	Բելառուս	48.5	53.9	62.2	85.9	46.4	49.8	30	30	30	33	64.2
150	Իրան	43.3	56.6	50.4	85.7	59.6	60.4	10	10	10	29	61.5

[1] http://www.heritage.org/research/tradeandforeignaid

Մտահոգության տեղիք է տալիս կոռուպցիայի բարձր մակարդակը: Միևնույն ժամանակ, համաձայն որոշ հետազոտողների, պետության զարգացման համապատասխան մակարդակների պարագայում կոռումպացվածությունն առաջադրում է հստակ խաղի կանոններ, ինչն արդյունքում դրականորեն է անդրադառնում տնտեսական գործընթացների վրա [5]:

Human Development Index.[1] *Մարդկային զարգացման ցուցանիշը (ՄԶՑ)* հաշվի է առնում մի ամբողջ շարք հիմնային բնութագրիչներ, որոնցից նշենք հանրության անդամների առողջական վիճակը և կյանքի տևողությունը, գիտելիքներ ստանալու հնարավորությունը, կյանքի ստանդարտները, անհատի անվտանգության աստիճանը, տղամարդու և կնոջ միջև հավասարությունը, մարդու իրավունքները (այդ թվում նաև աշխատանք ստանալու): Ինչպես երևում է *Աղյուսակ 2-ից*[2], Հայաստանն այս ցուցանիշով նույնպես տարածաշրջանի առաջատարն է:

Աղյուսակ 2

Human Development Index

ՄԶՑ	Պետություն	2004թ.
1	Նորվեգիա	0.965
8	ԱՄՆ	0.948
65	Ռուսաստան	0.797
67	Բելառուս	0.794
80	Հայաստան	0.768
81	Չինաստան	0.768
92	Թուրքիա	0.757
96	Իրան	0.746
97	Վրաստան	0.743
99	Ադրբեջան	0.736

Failed States Index.[3] 2006թ. հրապարակված այս վարկանիշային համակարգի կազմման ժամանակ հաշվի են առնվել հետևյալ բնութագրերը *(տե՛ս Աղյուսակ 3)*.

1. Աճող ժողովրդագրական ճնշումը
2. Փախստականների և ներքին տեղահանումների ենթարկված անձանց զանգվածային տեղաշարժը

[1] http://hdr.undp.org/hdr2006/statistics

[2] 2004-ից հետո *ՄԶՑ*-ն հաշվարկվել է այլ մեթոդիկայով, որի հետևանքով նշված երկրների հերթականությունը չի փոխվել, սակայն պահանջում է ցուցանիշների մանրակրկիտ մեկնաբանում, ինչը տվյալ հոդվածի շրջանակներում տեխնիկապես նպատակահարմար չի համարվել:

[3] Տե՛ս http://www.fundforpeace.org/web/index.php?option=comcontent&task=view&id=104&itenid=324

3. Դժգոհ և վրեժխնդրորեն տրամադրված խմբերի առկայությունը
4. Մարդկանց քրոնիկական և պերմանենտ տեղաշարժը
5. Տարբեր տնտեսական ճյուղերի անհավասար աճը
6. Տնտեսության կտրուկ անկումը
7. Պետության քրեականացումը և ապօրինականացումը
8. Հասարակական ծառայությունների վատթարացման աճը
9. Անձի իրավունքների ոտնահարումը
10. «Պետություն պետության մեջ» գոյանալու վտանգը
11. Խմբային (կլանային) ընտրանիների աճը
12. Այլ պետությունների կամ արտաքին դերակատարների միջամտությունը:

Աղյուսակ 3

Failed States Index

Տեղը	Երկիրը	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	Ցուցիչ ամփոփումը
43	Ռուսաստան	8	7.2	8	7	8	3.7	8.2	6.9	9.1	7.5	9	4.5	87.1
50	Բելառուս	9	5.1	5.5	3.5	8.5	6.3	9	7.5	7.3	6.8	8	8	84.5
53	Իրան	6.5	8.7	6.9	5	7.5	3	8.1	6.1	9.1	8	8.8	6.3	84.0
57	Չինաստան	8.5	5.1	8	6.6	9.2	4.5	8.5	7.3	9	5.5	8	2.3	82.5
60	Վրաստան	6	6.8	7.4	6.1	7	5.5	7.7	6.3	5.6	8.1	7.1	8.6	82.2
61	Ադրբեջան	6	8.1	7.3	5	7.5	5.9	8.1	6.5	6	7	7.5	7	81.9
82	Թուրքիա	7.2	6.1	7.3	5	8.6	4.1	6.1	5.7	5	6.4	6.9	6	74.4
86	Ուկրաինա	7	3.8	7.2	7.5	7	4.5	7	5.5	5.9	3	7.5	7	72.9
89	Հայաստան	6	7.1	5	7	6	5.1	7	6.5	6	4.5	5.8	5.5	71.5
111	Էստոնիա	5	5.1	4.5	4	5	3.5	5	4	3.7	2	5.9	3.3	51.0
128	ԱՄՆ	5	6	3	1	6	1.5	2.5	1	5	1	1.5	1	34.5
146	Նորվեգիա	3	1.5	1	1	2	1.8	1	1	1.5	1	1	1	16.8

Հաշվարկների մեթոդիկայի համաձայն՝ առավել կայացած երկրները հավաքում են ամենաքիչ միավորները, և ներկայացված վարկանիշում այս ցուցանիշով առաջատարը Նորվեգիան է:

Ինչպես երևում է աղյուսակից, Հայաստանի ցուցանիշները, տարածաշրջանի երկրների՝ Իրանի, Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի, ինչպես նաև Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի համեմատ, ավելի բարձր են: Նկատենք, որ չնայած այսօր պնդում են, թե ԱՊՀ երկրներում

առավել ժողովրդավարական են Ուկրաինան և Վրաստանը, Հայաստանի ցուցանիշներն այս չափանիշով (ցանկում 9-րդը՝ *անձի իրավունքների ոտնահարում)* համարյա չեն զիջում նրանց: Նշենք նաև, որ *դժգոհ և վրեժխնդրորեն տրամադրված խմբերի առկայության* մակարդակով (կետ 2) Հայաստանն էապես զիջում է իր հարևաններին, ինչը նույնպես կարելի է համարել անձի իրավունքների պահպանման թեև անուղղակի, բայց կարևոր ցուցիչ:

Հայաստանյան բնութագրիչներից մտահոգիչ են ժողովրդագրական ոլորտին վերաբերվողները: Խոսքը միայն 2-րդ կետի *(փախստականների և ներքին տեղահանումների ենթարկված անձանց զանգվածային տեղաշարժ)* մասին չէ. դա Ղարաբաղյան հակամարտության հետևանքն է: Ավելի լուրջ, եթե ոչ՝ ամենալուրջ, հիմնախնդիր է 4-րդ կետում արձանագրվածը՝ *մարդկանց քրոնիկական և պերմանենտ տեղաշարժը,* այլ խոսքերով՝ միգրացիան: Հարկ է նշել, որ միգրացիան գլոբալացման գործընթացում հասարակության *ներգրավվածության* ցուցիչներից մեկն է և դրանով իսկ վկայում է բացվող նոր հնարավորություններին հասարակության համարժեք ռեակցիայի մասին: Նման գործընթացների արդյունքում առաջացող «արտերկիր-հայրենիք» ֆինանսական հոսքերը դրականորեն են անդրադառնում տնտեսական ցուցանիշների վրա: Սակայն ժողովրդագրական «հյուծվածությունը» վաղ թե ուշ խիստ բացասաբար է անդրադառնալու հանրության կենսագործունեության բոլոր ոլորտների վրա, և հարկ է ընդունել, որ այս մարտահրավերին Հայաստանում դեռևս համարժեք պատասխան ձևավորված չէ[1]:

Հատկանշական է, որ 12-րդ չափանիշով, այսինքն՝ օտարերկրյա պետությունների կամ արտաքին դերակատարների ազդեցության մակարդակով, Հայաստանը նկատելիորեն զիջում է իր տարածաշրջանային հարևաններին և այդ ցուցանիշով մոտենում է նույնիսկ Ռուսաստանին: Դա վկայում է այն մասին որ Հայաստանի ինքնիշխանությունը ոչ թե ձևական, այլ իրական բովանդակություն ունի: Սակայն ինքնիշխանության բարձր աստիճանն արդի ժամանակաշրջանում իրարամերժ մեկնաբանությունների առիթ է դարձել, և այդ հարցը առանձին քննարկման կարիք ունի:

2. Ինքնիշխանություն և գլոբալացում

Այսօր ազգային, ինքնիշխան պետությունների ապագայի խնդիրը քաղաքական-հասարակագիտական ոլորտի ամենահրատապ հարցերից է: Հետազոտողների մի մասը, հիմք ընդունելով համընդհանուր քաղաքական-

[1] Հայաստանում ընդունված երկքաղաքացիության վերաբերյալ օրենքը *(տե՛ս http://www.parliament.am)* չի կարող արմատականորեն լուծել ժողովրդագրական հիմնախնդիրը, և այդ առումով հեռանկարային նախագիծ պետք է համարել հայրենադարձության մասին օրենքի ընդունումը [6]:

իրավական-տնտեսական դաշտի ձևավորումը և վերազգային ընկերությունների ու կազմակերպությունների դերակատարման աճը, գտնում են, որ գլոբալացման պայմաններում ինքնիշխանությունը զարգացման հեռանկար չունի: Համարվում է նաև, թե մարդկությունը մոտ ապագայում կառավարվելու է վերազգային կառույցի կամ կառույցների կողմից, ինչից հետևում է, որ Հայաստանի ինքնիշխանության բարձր մակարդակը ժամանակավրեպ երևույթ է և համարժեք չէ գլոբալ զարգացումներին:

Սակայն քիչ չեն նաև վերոնշյալ մոտեցման ընդդիմախոսները, որոնց կարծիքով՝ կառավարման նման համակարգը հակասում է մարդկության էությանը և որ ապագայում ազգային ինքնիշխան պետությունները շարունակելու են մնալ միջազգային հարաբերությունների հիմնական սուբյեկտը: Այս հայեցակարգի շրջանակներում ինքնիշխանության բարձր աստիճանը վկայում է գլոբալ գործընթացներին համարժեք լինելու մասին:

Նշենք նաև, որ ինքնիշխանության հարցն առանձնապես հրատապ է ոչ մեծ երկրների համար (ինչպիսին է նաև Հայաստանը), քանի որ ընդհանրական ռեսուրսների սակավության պատճառով նրանք առավել կախված են գլոբալ գործընթացներից:

Փոքր-ինչ պատմություն. Արևմտյան պատմագիտական ավանդույթի համաձայն, ազգային, ինքնիշխան պետությունները, որպես հանրության քաղաքական կազմակերպման հիմնական ձև, ձևավորվել են Եվրոպայում ծավալված Երեսնամյա պատերազմի ավարտից հետո: Այդ դարաշրջանում միմյանց դեմ հակամարտող եվրոպական հիմնական ուժերը Վեստֆալիայի (Սաքսոնիա) Օսնաբրյուկե և Մյունստեր քաղաքներում ընթացող բանակցությունների արդյունքում 1648թ. կնքեցին խաղաղության պայմանագիր, որը և նշանավորեց «ազգային պետություն» հասկացության վրա հենված միջազգային հարաբերությունների դարաշրջանի սկիզբը: Վեստֆալյան պայմանագիրն ամրագրեց նաև մեկ այլ իրողություն՝ Հռոմեական սուրբ կայսրության (որը մինչ այդ հավակնում էր լինել Եվրոպայի քաղաքական ազդեցության և ռազմական ուժի գլխավոր կենտրոնը) վերջնական վախճանը: Այսինքն՝ հայտնի վերապահումներով կարելի է պնդել, որ «Վեստֆալյան խաղաղությունը» և «ազգային պետություն» իրավական հասկացության ձևավորումը այն դարաշրջանի եվրոպական «միաբևեռ համակարգի» փլուզման հետևանք էին:

Հետվեստֆալյան ժամանակաշրջանում ազգային պետությունները վերափոխումներ և զարգացումներ են ապրել: Մասնավորապես, քաղաքական մենատիրության ձգտող կենտրոնների գոյացումը, որպես կանոն, նվազեցրել է ազգային պետությունների դերակատարումը և նշանակու-

թյունը: Օրինակ, Առաջին սառը պատերազմի դարաշրջանում և՛ «սոցիալիստական ճամբարի», և՛ «ազատ աշխարհի» երկրները, հաճախ սեփական կամքին հակառակ, իրենց իրավասությունների (հատկապես միջազգային հարաբերությունների ոլորտում) մի զգալի մասը «փոխանցել» էին համապատասխանաբար Մոսկվային և Վաշինգտոնին: «Սոցճամբարում» նման քաղաքական «կարգապահությունը» պահպանելու նպատակով «սովետները» հաճախ դիմում էին ռազմական ուժի, որի համար արժանանում էին համընդհանուր պախարակման: Մինչդեռ ԱՄՆ-ը իր «դաշնակիցներին» վասալային կարգավիճակում պահպանելու համար կիրառում էր ավելի նուրբ տեխնոլոգիաներ. դրանք ոչ միայն ավելի նպատակահարմար էին քաղաքական տեսակետից, այլև թույլ էին տալիս արևմտյան գաղափարախոսներին հիմնավորված քարոզել «ազատ աշխարհի» առավելությունների մասին և մեղադրել «սովետներին» ինքնիշխանության սկզբունքները խախտելու մեջ:

Առաջին սառը պատերազմի արդյունքում փլուզվեց ոչ միայն «սոցճամբարը», այլև այն կենցաղային պատրանքը, թե «չարի կայսրության» տապալումը կհանգեցնի ազգային և իրապես ինքնիշխան պետությունների ձևավորմանը: Միաբևեռ համակարգի հաստատումն իր հետ բերեց այլ իրողություններ: Մասնավորապես շրջանառության մեջ դրվեց գլոբալացում եզրը, որն, ի թիվս այլ հանգամանքների, պարունակում է աշխարհաքաղաքական էքսպանսիայի հստակ բաղադրիչ: Ճիշտ է, նորանկախ պետություններից շատերը ձեռք բերեցին անկախության ատրիբուտներ, սակայն նրանց ինքնիշխանության չափը և քաղաքական կարգավիճակը քիչ բանով են տարբերվում նախկինից, իսկ տարբերությունն այն է, որ կառավարման կենտրոնը Մոսկվայից տեղափոխվել է Վաշինգտոն կամ Բրյուսել: Նման երկրները քաղաքագիտական-վերլուծական գրականությունում ստացել են *«proxy»* անվանումը, որն իմաստային առումով թերևս ճիշտ է թարգմանել որպես «վստահագրով ղեկավարվող»:

Ինքնիշխանության արդի մեկնաբանումները. Հարկ է նկատել, որ վերոնշյալ իրողությունները պատմական կամ քաղաքական առումով միանգամայն բնականոն են. պատմության ողջ ընթացքում ինչ-որ երկրներ, կախված լինելով ավելի հզորներից, ունեցել են սահմանափակ ինքնիշխանություն, իսկ երբեմն նաև՝ գաղութային կարգավիճակ: Կարելի է ասել, որ այս կամ այն պետության ինքնիշխանության չափը մշտապես պայմանավորված է եղել աշխարհաքաղաքական զարգացումներով, ինչպես նաև տվյալ ազգի հավաքական և հատկապես՝ ընտրանու կարողություններով: Սակայն բոլոր պարագաներում հետվեստֆալյան դարաշրջանում առ-

նվազն տեսական քաղաքագիտությունում ինքնիշխանության անհրաժեշտությունն ընդունվում էր անվերապահորեն: Մինչդեռ վերջին ժամանակներս վերլուծական գրականությունում նկատվում է «ինքնիշխանության» վերիմաստավորման հստակ միտում այն համատեքստում, թե գլոբալացման և պետությունների փոխկապվածության աճի գործընթացներն իմաստազրկում և արժեզրկում են «ինքնիշխանություն» հասկացությունը *(տե՛ս, օրինակ, [7])*: Այդ կապակցությամբ նկատենք, որ ինտեգրման արդի գործընթացներն օբյեկտիվ բնույթ են կրում, և պետությունների փոխկապվածությունը քաղաքական-տնտեսական ոլորտներում, իրոք, աճել է: Այսօր ինքնիշխանությունը չի կարող հանդիսանալ բացարձակ կատեգորիա, և ցանկացած պետական միավոր չի կարող լիովին արհամարհել միջազգային նորմերը և միջազգային կազմակերպությունների[1] բանաձևերը: Սակայն այս ամենը չի կարող հիմք հանդիսանալ, որպեսզի ազգային պետություններն անվանվեն «սատանայական մտահղացում», ինչպես արտահայտվել էր ամերիկյան շատ բարձրաստիճան մի պաշտոնյա: Ակնհայտ է, որ նման մոտեցումները սպասարկում են «Միաբևեռ աշխարհակարգ» անվանումը կրող քաղաքական նախագիծը:

Հակառակ դիրքերից են հանդես գալիս «Բազմաբևեռ աշխարհակարգի» կողմնակիցները: Ըստ նրանց մոտեցումների՝ ազգային պետության և ինքնիշխանության պահպանումը չի խոչընդոտում ինտեգրման և գլոբալացման գործընթացներին: Համարվում է նաև, որ ապասուվերենացումն ընդհանուր առմամբ բացասաբար է անդրադառնում գլոբալ զարգացումների վրա, քանի որ նման միտումը կարող է աշխարհը վերածել զորանոցի կամ հանրակացարանի, իսկ այդպիսի պայմաններում հակասությունները ձեռք են բերում առավել արմատական բնույթ: Քաղաքագետները հատկապես շեշտում են այն թեզը, որ ինքնիշխանության արժեզրկումը հանգեցնելու է ազգային-մշակութային վերասերման և բնատիպության/ինքնատիպության վերացման:

Մասնավորապես ռուսական քաղաքագիտական դպրոցի ներկայացուցիչներն ինքնիշխանության և բնատիպության պահպանումը հնարավոր են համարում՝ ելնելով, այսպես կոչված, նեոկապիտալիստական տեսություններից, համաձայն որոնց՝ ենթադրվում է համընդհանուր բարեկեցության գաղափարների և հասարակության բարոյական արժեքների հաղթանակում: Նման պարագայում ազգային ինքնիշխան պետության հասկացությունը, ինչպես նաև բնատիպությունը և ազգային գաղափարախոսություն-

[1] Այս համատեքստում հարկ է շեշտել, որ ինքնիշխանության կատեգորիան կասկածի տակ դնող վերլուծաբաններից ոմանք, սկզբունքորեն հակասելով իրենք իրենց, գտնում են, թե ՄԱԿ-ը նույնպես կորցրել է ակտուալությունը և պետք է հեռանա քաղաքական թատերաբեմից:

ները կներդաշնակեցվեին գլոբալ զարգացման վեկտորի հետ և կնպաստեին համամարդկային նպատակների հասնելուն:

Չբացառելով նման սցենարի հնարավորությունը՝ նկատենք, որ այն հետևում է ռուսական քաղաքական բարոյական մշակույթի ավանդույթներին [8]: Նման զարգացումն, իհարկե, առավել ցանկալին և օպտիմալն է: Բայց դրա հետ միասին այդ սցենարն ինչ-որ չափով ուտոպիական է. այն հիշեցնում է համընդհանուր բարօրության, մասնավորապես՝ կոմունիզմի ժամանակաշրջանի գալու գաղափարը: Մինչդեռ արդի աշխարհի իրողություններն առայժմ լավատեսության առիթ չեն տալիս, և եթե նույնիսկ նման ներդաշնակ աշխարհակարգ հաստատվի էլ, ապա՝ շատ հեռավոր ապագայում:

Սակայն տպավորությունն այնպիսին է, որ ինքնիշխանության պահպանումը բխում է ոչ թե ուտոպիստական թեզերից, այլ իրապես գոյություն ունեցող քաղաքական իրավիճակից:

Սառը պատերազմ և ինքնիշխանություն. Վերլուծաբանական հանրությունում այսօր գերակայում է այն կարծիքը, թե արդի քաղաքական իրադրությունը նման է նրան, ինչ կար ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև Առաջին սառը պատերազմի տարիներին: Սակայն այս Երկրորդ սառը պատերազմը, ի տարբերություն նախորդի, *բազմաբևեռ է,* և հակամարտությունն ընթանում է ոչ թե երկու ունիվերսալ գաղափարախոսությունների միջև, այլ ընդունել է *միջքաղաքակրթական-ազգամիջյան* դիմակայության բնույթ [9]: Կարելի է ասել, որ ինքնիշխանության և բնատիպությունը պահպանելու ձգտումն է այն շարժիչ ուժը, որն ընդդիմանում է ԱՄՆ «հեգեմոնիզմին» և ջանում է ձևավորել բազմաբևեռ համակարգ: Նշենք նաև, որ բազմաբևեռության ձևավորման ներկա միտումները կարծես թե չեն ենթադրում «կոշտ» ռազմաքաղաքական դաշինքների ստեղծում, ինչը հնարավորություն է տալիս Հայաստանի նման ոչ մեծ պետություններին իրագործել քաղաքական ստրատեգիաներ՝ ելնելով սեփական ազգային շահերից: Զարգացումների նման տրամաբանությունը ստեղծում է գուցե և ոչ այնքան հարմարավետ, սակայն օբյեկտիվ պայմաններ ինքնիշխանության նշանակության աճի համար:

Վերոնշյալ հիմնավորումները թույլ են տալիս պնդելու, որ Հայաստանի ինքնիշխանության բարձր աստիճանի ձգտումը միանգամայն համարժեք է գլոբալ աշխարհի ռազմաքաղաքական զարգացումներին և ապահովում է որոշակի առավելություններ իր ազգային շահերի պաշտպանման գործում:

Այսպիսով, Հայաստանը մի շարք կարևոր չափանիշներով (կայունության և ինքնիշխանության, տնտեսական ազատականության և մարդկային

զարգացման) հանդիսանում է մեր տարածաշրջանի առաջատարը: Դա հերթական անգամ հաստատում է այն դրույթը, որ մրցունակ լինելու գլխավոր նախապայմանը ոչ թե բնական պաշարներն են կամ աշխարհաքաղաքական նպաստավոր դիրքը, այլ առաջին հերթին քաղաքակրթական մշակույթը և այդ մշակույթը կրող մարդկային ռեսուրսները: Վերջինիս կարողության չափանիշ են հանդիսանում *ստեղծագործ ընտրանու* (համաձայն Առնոլդ Թոյնբիի եզրաբանության) կողմից ձևավորվող հայեցակարգերն ու ազգային նախագծերը և, իհարկե, դրանք գործնականում իրականացնելու կարողությունը:

Նկատենք, սակայն, որ տարածաշրջանային առաջատարի կարգավիճակը *դեռևս բավարար չէ հայ քաղաքական և ստեղծագործ ընտրանու* համար, և նման հավակնոտությունն արդարացված է: Վերոհիշյալ միջազգային կազմակերպությունների գնահատականներից հետևում է նաև, որ հանրապետությունում դեռևս քիչ չեն հիմնախնդիրները, որոնք էլ ընդգծում են մեր ոչ այնքան շահեկան դիրքերը համաշխարհային հարթությունում:

3. Զեռքբերումներ և հիմնախնդիրներ

Ելնելով մարդկային ռեսուրսների կամ մարդկային կապիտալի գործոնը կարևորելու տրամաբանությունից՝ փորձենք գնահատել հայաստանյան որոշ քաղաքական գործընթացներ, որոնց մեջ ներառված են դրական զարգացումների համար անհրաժեշտ նախադրյալները: Նույն քաղաքական տրամաբանությունից ելնելով՝ համառոտ դիտարկենք այն երևույթները, որոնք կարող են խաթարել մեր հետագա առաջընթացը:

Գաղափարախոսական «եռամիասնության» ձևավորման հրատապությունը. Հայտնի է, որ քաղաքական ընտրանու մրցունակությունը ներքին և արտաքին հարթություններում գլխավորապես պայմանավորված է այն գաղափարախոսությունով, որով նա առաջնորդվում է: Այս համատեքստում նկատենք, որ այսօր «ազատականություն» և «ժողովրդավարություն», ինչպես նաև «ամբողջատիրություն» և «ընկերավարություն» հասկացությունները տարբեր քաղաքակրթական գոտիներում ու երկրներում մեկնաբանվում են ամենատարբեր իմաստներով: Արդյունքում՝ աշխարհում գործում են մոդիֆիկացված կամ այլ խոսքերով՝ *սինթետիկ, հիբրիդային* գաղափարախոսություններ և տնտեսական հայեցակարգեր, որոնք տարբեր համամասնությամբ ազատական, սոցիալիստական (ընկերավարական) և քաղաքակրթական (ազգային) գաղափարներ ու արժեքներ են պարունակում: Անգամ հպանցիկ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն ազգերը և պետությունները, որոնք կարողացել են հաջողությամբ իրականացնել

այդ երեք բաղադրիչների ներդաշնակ համակցումը, առավել մեծ հաջողություններին են հասել: Նման երկրներից առավել ուշադրության են արժանի հարուստ քաղաքական ավանդույթներ ունեցող անգլոսաքսոնյան երկրները: «Գաղափարախոսական եռամիասնություն» կարողացել է ձևավորել նաև «նոր» Չինաստանը, որտեղ ներդաշնակորեն համագոյակցում են պահպանողական (ազգային-քաղաքակրթական), սոցիալիստական և ազատական մոտեցումները: Նշված օրինակները թույլ են տալիս պնդել, որ այսօր գլոբալ հարթությունում երկրների մրցունակությունը պայմանավորված է նրանց՝ գաղափարախոսական նման «եռամիասնություն» արտահայտող համակարգ ձևավորելու կարողությամբ:

Վերոնշյալի համատեքստում Հայաստանում Հանրապետական կուսակցության կողմից պահպանողականությունը (որն ազգային գաղափարախոսության՝ «եռամիասնության» քաղաքակրթական-ազգային բաղադրիչն է) կուսակցական գաղափարախոսություն հռչակելը պետք է ընկալել որպես առաջին, բայց կարևոր քայլ ամբողջական և մրցունակ գաղափարախոսական համակարգի ձևավորման ուղղությամբ: Նկատենք նաև, որ պահպանողականությունը դավանում է շարունակականության գաղափարը, ինչն իր հերթին հանդիսանում է տեղեկատվական անվտանգության հիմնաքարը:

2007թ. կայացած խորհրդարանական ընտրությունները վկայում են այն մասին, որ հանրապետությունում ձևավորվում են նաև ազատական գաղափարախոսություն դավանող կուսակցություններ:

Արտաքին աշխարհին համարժեք գաղափարախոսական «եռամիասնություն» ձևավորելու նպատակով քաղաքական բարձրագույն ընտրանին, թերևս, պետք է ձգտի ստեղծել անհրաժեշտ պայմաններ, որպեսզի հանրապետությունում ձևավորվի նաև սոցիալիստական ուղղվածություն ունեցող կարող քաղաքական ուժ: Նման քաղաքական տեխնոլոգիան թույլ կտա ոչ միայն արդյունավետ մշակել ներքին սոցիալական բնույթի խնդիրների լուծման մեխանիզմները, այլև կնպաստի հարաբերությունների զարգացմանն այն երկրների հետ (Չինաստան, ԵՄ պետություններ), որտեղ սոցիալիստական կուսակցությունները կարևոր դերակատարում ունեն:

Ազգային անվտանգություն. Շարունակելով թեման՝ տեղին է հիշել այն ձևակերպումը, ըստ որի՝ ազգային գաղափարախոսությունը Ազգային անվտանգության դոկտրինի խտացված արտահայտությունն է: Այդ համատեքստում ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության *(ԱԱՌ)* մշակումն առաջնային նշանակություն է ստանում [10]: Կարևոր է այն հանգամանքը, որ *ԱԱՌ* ձևավորման աշխատանքներին մասնակցել է հանրապետության փորձագիտական հանրության և քաղաքական-պետական շրջա-

նակների ներկայացուցիչների մի ստվար զանգված, ինչը պետք է գնահատել որպես ազգային նախագծի շուրջ *ստեղծագործ ընտրանուն* համախմբելու փորձ: Հայտնի է, որ փորձագիտական հանրությունում այդ փաստաթղթի առանձին դրույթների վերաբերյալ կան տարբեր մոտեցումներ, սակայն դա բնականոն երևույթ է: Բոլոր պարագաներում անվիճելի է այն իրողությունը, որ *ԱԱՌ* ստեղծման արդյունքում ամբողջական պատկերացումներ և մոտեցումներ են ձևակերպվել Հայաստանի ու հայության գործունեության գրեթե բոլոր ոլորտների վերաբերյալ: Այդ առումով *ԱԱՌ* փաստաթուղթը դժվար է գերագնահատել:

Մասնավորապես փաստաթղթում առավել ընդգրկուն են ներկայացված հանրապետության արտաքին քաղաքականության ուղենիշները: Հայտնի է, որ լինելով ոչ մեծ երկիր՝ Հայաստանը, հաշվի առնելով հատկապես ԼՂՀ և Ցեղասպանության հետ կապված գործընթացները, ուրույն մասնակցություն ունի գլոբալ քաղաքական զարգացումներին: Ի լրումն, ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Եվրամիության երկրները, Իրանը և Թուրքիան, ելնելով Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական դիրքից, համարում են, որ Հայաստանը գտնվում է իրենց ազգային շահերի շրջանակում: Մոտ ապագայում, ամենայն հավանականությամբ, նման մոտեցում կցուցաբերի նաև Չինաստանը: Այդ համատեքստում *ԱԱՌ*-ում հիմնավորվում են երկու՝ ***փոխլրացման և ներգրավվածության*** դոկտրինալ բնույթի սկզբունքները: Նման ռազմավարական մեթոդաբանությունը համարժեք է գլոբալ աշխարհի տրամաբանությանը և տարածաշրջանային իրողություններին: Այն թույլ է տալիս կառուցողական հարաբերություններ հաստատել աշխարհաքաղաքական դերակատարների հետ՝ պահպանելով ինքնիշխան կարգավիճակը, ինչը երաշխիք է ազգ-պետության բնականոն զարգացման համար:

Մեր հիմնախնդիրները. Ինչպես նշել ենք, մարդկային ռեսուրսների հարթությունում դեռևս առկա են բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնց նկատմամբ դեռևս չեն ձևավորվել կառուցողական և արդյունավետ մոտեցումներ: Դրանցից առանձնացնենք մտավոր/ինտելեկտուալ ռեսուրսների վերարտադրման հիմնախնդիրը կամ, այլ խոսքերով, գիտական և տեխնոլոգիական ոլորտի զարգացման խնդիրները:

Հայտնի է, որ այս կամ այն երկրի իրական ներուժը, առավել հաճախ՝ հատուկ մեթոդաբանության միջոցով, գնահատվում է այն ***ընդհանրացված գիտելիքների*** չափով, որոնց տիրապետում է այդ երկրի հանրությունը: Այլ խոսքերով՝ պետության մրցունակությունը պայմանավորված է նրանով, թե որքանով է տվյալ երկրի հանրությունը մոտ ***տեղեկատվական հանրության*** չափանիշներին: Այս առիթով նկատենք, որ ***ընդհանրացված գիտելիքները***

կարևոր են ոչ միայն նրանով, որ դրանք տրանսֆորմացվում են բարձր տեխնոլոգիաների և դրանով իսկ բարելավում երկրի տնտեսական-սոցիալական ցուցանիշները: Ոչ պակաս, իսկ գուցե և առաջնային նշանակություն ունի այն հանգամանքը, որ գիտական-տեխնոլոգիական ոլորտն է, որ համալրում է ***ստեղծագործ-քաղաքական ընտրանու*** շարքերը:

Մինչդեռ պետք է ընդունել, որ և՛ քաղաքական-պետական ընտրանին, և՛ ակադեմիական շրջանակներն առայժմ չեն ներկայացրել որևէ արդյունավետ նախագիծ այդ ոլորտում հանրապետությունում ստեղծված իրադրությունը շտկելու ուղղությամբ:

Հատկանշական է, որ Հայաստանը, հայտնի գործընթացների հետևանքով կորցնելով իր լուրջ գիտատեխնոլոգիական ներուժը, այնուամենայնիվ, կարողացել է ինչ-որ չափով պահպանել ոլորտի կենսունակությունը: Օրինակ, 2004-2006թթ. հայաստանյան գիտնականները, ըստ ՀՀ ԳԱԱ տվյալների, հրապարակել են մոտ 800 աշխատանք օտարերկրյա վարկանիշային ամսագրերում, ինչը զգալիորեն գերազանցում է տարածաշրջանի այլ երկրների ցուցանիշները (Վրաստանում՝ 100-ից մի փոքր ավելի, Ադրբեջանում՝ մոտ 30): Այսինքն՝ չնայած անբարենպաստ պայմաններին, հանրությունը կարողացել է պահպանել իր մտավոր ներուժի մի մասը:

Ստեղծված իրավիճակի մասնակի փոխհատուցում կարելի է համարել տեղեկատվական տեխնոլոգիաների *(ՏՏ)* ոլորտի զարգացման բարձր տեմպերը: Կարևոր է նաև այն, որ ոլորտի փորձագետները փորձում են նախագծել հետագա զարգացման մոդելները: Համաձայն *Ev Consulting* հայկական ընկերության կողմից բերված տվյալների[1], 2010թ. ԱՄՆ-ից և Մեծ Բրիտանիայից երրորդ երկրներ կտեղափոխվեն մոտ 885.200 աշխատատեղեր, և 2006-2010թթ. *ՏՏ* վերապատվերների *(outsourcing)* շուկան $130 մլրդ-ից կաճի $185 մլրդ-ի: Եվ ելնելով այդ իրողությունից՝ առաջարկվել է 2011թ. Հայաստանում ոլորտի զարգացման երեք մոդել, համաձայն որոնց՝ 2011թ. ոլորտի համախառն եկամուտը կկազմի մինչև $248 մլն, իսկ աշխատակիցների թիվը՝ մինչև 9500, և դա այն պարագայում, երբ արտադրողականությունը կարող է կազմել մինչև $26000:

Ինչպես տեսնում ենք, այս ոլորտի հեռանկարները լավատեսական են և, որ գլխավորն է՝ իրատեսական. բավական է նշել, որ *ՏՏ* ոլորտի աշխատակիցների թվաքանակն արդեն այսօր գերազանցում է *«Հայաստան 2020»* նախագծում ներկայացված լավատեսական կանխատեսումները [11]: Պետք է հուսալ, որ այս ոլորտում կուտակված մասնագիտական և փորձագիտական ունակությունները կնպաստեն գիտական և տեխնոլոգիական ողջ ոլորտի առողջացման գործընթացներին:

[1] Տվյալները վերցված են Մանուկ Հերգնյանի *(Ev Consulting)* «Հայաստանի ՏՏ ոլորտի աճի մոդելը» հետազոտությունից (տես՝ www.ev.am ; www.noravank.am/?l=1&d=10&f=797)

Որոշ հետևություններ

1. Համաձայն միջազգային վարկանիշային տվյալների, մի շարք կարևոր ոլորտներում Հայաստանը տարածաշրջանի առաջատարն է. դա վկայում է գլոբալ գործընթացներին հայկական հանրության համարժեք լինելու մասին:
2. Հանրապետությունում տեղի են ունենում գործընթացներ, որոնք կարող են հանգեցնել օպտիմալ գաղափարախոսական եռամիասնության և ազգային անվտանգության համալիր հայեցակարգի ձևավորմանը: Այս ուղղությամբ տարվող աշխատանքներն արտաքին և ներքին մարտահրավերներին համարժեք պատասխաններ տալու կարողության լրացուցիչ ցուցանիշ են հանդիսանում:
3. Հիմնական խնդիրները, որ ներկա պահին լուծում չեն ստացել, վերաբերում են երկրի ժողովրդագրական իրավիճակին, ինչպես նաև գիտական-տեխնոլոգիական ոլորտի անբարվոք դրությանը: Առաջինի լուծումը հավանաբար կլինի հայրենադարձության կազմակերպումը: Երկրորդ հիմնախնդրի լուծումը կարող է դառնալ *ՏՏ* ոլորտի (որտեղ որոշակի հաջողություններ են գրանցվել) ոչ գծային, արագացումով ընթացող զարգացումը:

Սեպտեմբեր, 2007թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Дж. Тойнби А.,* Цивилизация перед судом истории, Москва, 2003.
2. *Հարությունյան Գ.,* «Քաղաքակրթական գործոնը տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրների համատեքստում», 21 Век, #1(3), 2006; *Տիգրան Սարգսյան,* «Հայկական քաղաքակրթությունը որպես հավակնոտ նախագիծ», 21 Век, #1, с. 3, 2007.
3. *Մարջանյան Ա.,* «Некоторые замечания о методике определения “Индекса экономической свободы», 21 Век, #2, с. 12, 2007.
4. *Агаджанян М.*, «Диаспоральный ресурс Армении как «асимметричный» ответ на ее изоляцию», http://www.noravank.am/?l=2&d=19
5. *Сергеев В.М., Казнацев А.А.,* «Сетевая динамика глобализации и типология «глобальных ворот», Полис, #2, с. 18, 2007.
6. Հայրենադարձության մասին ՀՀ օրենքի նախագիծ, «Եզերք» մատենաշար, #1, էջ 40, 2006:
7. *Кеннеди П.,* «Вступая в двадцать первый век», с. 148, М., 1997; *Orrin C.Judd, Paul Driessen, Ramesh Ponnuru, Jeremy Rabkin and Norton Dunop.* «Redefining Sovereignty», Heritage Lectures, april 10, 2007; *http://www.heritage.org/Research/World-*

wideFreedom/hl1007.cfm
8. *Панарин Ал.,* «Искушение глобализмом», Русский Национальный Фонд, Москва, 2000. *Федотова В.,* «Второе дыхание Вестфальской системы», Политический класс, #4(28), с. 97, 2007.
9. *Арутюнян Г.,* «Многополярная Холодная война», 21 Век, 1(5), с.11, 2007; *Собелл В., «*Психологические основы новой «холодной войны», Johnson's Rusia List, 22.09.2006, http://www.inosmi.ru/stories/02/07/18/3106/230049.html
10. Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարություն, 2007, http://www.mil.am
11. «Армения 2020». Сборник сценариев, Ереван, 2004.

АРМЕНИЯ В ГЛОБАЛЬНОМ МИРЕ

Гагик Арутюнян

Резюме

Анализ рейтинг-листов некоторых международных организаций показывает, что Армения по ряду интегральных показателей – по степени экономической свободы, по индексу человеческого развития, а также как состоявшееся государство – опережает региональные страны (Грузию, Азербайджан, Турцию и Иран). Согласно *Failed States Index,* Армения обладает также высокой степенью суверенитета, т.е. является самостоятельной единицей и тем самым в состоянии более эффективно соблюдать свои национальные интересы в условиях *Многополярной холодной войны*. Позитивными являются также некоторые процессы во внутриполитическом пространстве, а именно: формирование *консервативной идеологии* и разработка *Стратегии национальной безопасности*. Эти шаги созвучны тем мировым тенденциям, которые имеют место в сферах национальной идеологии и национальной безопасности. Таким образом, армянское общество в целом адекватно реагирует на внешние вызовы и в определенном смысле удовлетворяет критерию Арнольда Тойнби об успешности цивилизаций.

Вместе с тем, перед армянским обществом и национальной элитой стоит ряд проблем, по которым пока не найдены оптимальные решения. Особое беспокойство вызывают *неблагоприятная демографическая ситуация* и *отсутствие обоснованной программы по развитию научно-технологической сферы.* Решения этих проблем, возможно, лежат в плоскости продуманной *репатриации* и в ускоренном, нелинейном развитии *информационных технологий.*